լիս Աւչալայում, նա դրած էր քաղաքի ջրամբարի մօտ և հիանալի բանում էր, տալով մինուտում ջուր 10 սանտիմետր խողովակով – 6½ մետր բարձրութեան ջրվէժից, որը թափում էր 25 սանտիմետր խողովակով մէկ մետր բարձրութիւնից:

Խան-Ազիզովի գործիքում պահպանուած է միայն գաղափարը առաջի հնարողի: Նա ունի **հասարակ ձեւ, ամուր է, լաւ բանում է**, իսկ գինն էլ 2-3 անգամ պակաս է միւս ջուր բարձրացնող մեքենաներից:

Գ. Խան-Ազիզովի գործիքում, բաց ի մէկ հասարակ խցանից և ամենահասարակ ձեւի ռէզինէ փնտիլներից ուրիշ բանող մասեր չկա: Սարքելը ամենահասարակ կերպի է հարկաւոր է. միայն միացնել պտուտակներով մեքենան խողովակների հետ, կամ պտուտելով մացցնել խողովակները իրար մէջ:

«Կավկ. Սիլսկ. խոզ». - N. 285.

Իսկ «Մշակ» լրագիրն կր վկայէ.

Ցուցահանդէսի գեղեցկութիւնից մէկն էր և պ. Լևոն Խան-աղեանի ջրաբաշխական «աֆտո-էլեվատորը»: Առանձին շնորհակալութեան արժանի է այդ պարոնը, որ ամենամեծ ուրախութեամբ յանձն առաւ հեռագրով բերել տալ Թիֆլիսից իր հնարած




Զ Բ

Նոյն գործիքը որ կը ցուցընէ ջրոյ բաշխման եղանակը:

մեքենան: Ցուցահանդէսի առաջին և երկրորդ օրը դրած էր ձորում, ի ցոյց ժողովրդի, և ինքն, պ. Խանաղեան, ուրախութեամբ բացատրում էր ամենքին և իւրաքանչիւրին առանձին իր մեքենայի կազմակերպութիւնը: Աչքի էին ընկնում զանազան տեղերից եկած գիւղացիներ, զինւորական դասից և ցուցահանդէսի բոլոր անդամները: Ջրաբաշխական «աֆտո-էլէվատորը», իր հասարակ կազմութեամբ և ջուր բարձրացնելու կարողութեամբ զարմացնում էր ոչ միայն գիւղացիներին, այլ և կրթված դասին: Շատերը կարծում էին, թէ նրա բոլոր գաղտնիքը ծածկված է հեսաքրքրողի աչքից, բայց երբ մեքենայի հետ եկած արհեստաւորը ցոյց տուեց ամենը, տեսան որ ներսի կազմութիւնը նոյնքան հասարակ է, որքան և դրսի: Մեքենայի սարքելը տևեց մօտ 1½ ժամ: Ցուցահանդէսի անդամ Ս. Արովեանը խօսեց այդ մեքենայի մեծ նշանակութեան մասին ընդհանուր գիւղատըն-տեսութեան համար և յայանից կոմիտէտի կողմից շնորհակալութիւն հնարողին: Մանրամասնութիւններին մէջ չեմ մտնում մեքենայի մասին, մի քանի անգամ տպված է «Մշակում»: Այսքանը միայն կասեմ, որ ցուցահանդէսից յետոյ, մի քանի գիշեր մասնաւոր մարդիկ բանակցութիւն սկսեցին պ. Խանաղեանի հետ՝ իրանց գիւղերում և կալուածներում այդ մեքենան դնելու մասին:

Ժամանակին «Բազմավէպ»ի ընթերցողաց ծանուցած էինք պ. Լեւոն Խան-Աղեանցի այս գիւտը. բայց ասոր վրայ մանրամասն յօդուած մը հրատարակուած չըլլալով, վրան որոշ գաղափար մը կարելի չէր ունենալ և հաղորդել. այժմ ներկայ յօդուածովս կ'իմանանք որ սա օգտակար գործի մ'է և ըստ կազմութեան գաղղիական բարձրացուցիչ սիփոնէն աւելի պարզ է: Կը մաղթենք հայ հեղինակին դեռ ուրիշ նոր օգտակար գիւտեր:

ԽՄԲ.

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԻՍ

## 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ

### ԱՆԳՂԻԱ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ մէջ Անգղիացիք հանեցին ի Թրանսվաալ 15,000 հոգի յօգնութիւն Գէորգ Ուայթի: Պոէրներն այլ և այլ յարձակումներ ըրին, բայց միշտ չունեցան նոյն յաջողութիւնը.— և իրենց ունեցած նախկին յաջողութենէն օգուտ չքաղեցին, և Անգղիացիք օրըստօրէ շատցուցին զինուորները, իսկ Պոէրներն երբեմն աստին, երբեմն անդին յարձակելով կորսնցուցին իրենց ուղղութիւնը: Թրանսվաալի վերջին պաշտօնական ծանուցման համեմատ Փրեթորիայի մէջ կան 1338 անգղիացի գերիներ, որոց 62 չեն զինուորականք:

Ուէտվերս Պուլլէր զանազան ծրագիրներ հաստատեց ապահով կերպով յաղթութիւնը ձեռք բերելու համար, բայց իրմէ աւելի Մէթուէն զանազան տեղեր յաղթեց Պոէրներուն և տիրեց Կրաս Փանի բլրոց, և անկէ հալածեց 2500 Պոէրները, ձեռք ձգեց շատ ձիեր և վառօդ, թէպէտ և Անգղիացիք ալ բաւական կորուստ ու վիրաւորներ ունեցան թէ պատերազմներու և թէ զինուորաց փոխադրութեան մէջ: Այսպէս բաղդն երբեմն Պոէրները, երբեմն Անգղիացիները կը զօրացընէ:

Զամպէրլէնի ի Լէյչէսթըր խօսած քաղաքագիտական ճառը Եւրոպիոյ մէջ այլ և այլ ազ-

digitised by A.R.A.R.@

դեցութիւններ ունեցաւ. — Նա՝ իւր ճառին մէջ Միացեալ Նահանգաց հետ մեծ սէր ու բարեկամութիւն կը յայտնէ, — ապա Գերմանիոյ հետ դաշնակցութիւնը կ'ակնարկէ, զԳաղղիան կը պախարակէ։ Գաղղիական լրագիրք մեծ զայրութով խօսեցան այս ակնարկութեանց վրայ։

## ԳԱՂՂԻԱ

Նոյեմբեր 14ին գաղղիական խօսարանը բացուեցաւ այլ և այլ աղմկալից դէպքերով։ Քօշէն և Կրանմէզօն մեծապէս մեղադրեցին պաշտօնարանը՝ որ կրօնաւորական միաբանութիւնները կը մերկացընէ և բանակը չի պաշտպաներ։ Գէվաէս ընկերվարական տարաձայն խմբին ծրագիրը պարզեց. Լազի սաստիկ խիստ լեզուով յարձակեցաւ Կալիֆֆէի դէմ, այնպէս որ նախագահը լռեցուց զինքը, որ համարձակեցաւ իսկ ըսելու՝ թէ վարչութիւնն այնչափ անարժան է որ զօրապետաց պարտք համարուեցաւ անհրահանգ ըլլալն։ Կալլիֆէ ալ ձախակողմեանց ծափահարութեանց մէջ սկսաւ բացատրել այն ամէն պատճառները՝ որոց համար ինքն Նեկրիէ զօրավարին հետ այնպէս վարուեցաւ, վասն զի սա կը մղէր բանակը արհամարհելու զտէրութիւնն, նոյնպէս Ռոժէին հետ՝ որ չափազանց կը խօսէր։ — Արդարութեան դատաստանարանն տասնեւչորս ամբաստանելոց խնդրով զբաղած է, և այս խնդրոյս քննութենէն օրըստօրէ ծագեցան յուզմունք, նախատինք ընդդէմ դատաւորաց։ Տէլքասէի խօսած ճառը իրեն մեծ պատիւ բերաւ. ճառախօսութեանը ինչ ինչ իմաստներն կը հաւաստեն թէ սոսկ ծրագրի մարդ չուզեր ըլլալ, և թէ կը փափաքի Ռուսիոյ հետ անխախտ դաշնակցութեամբ ապագան ապահովցընել։ — Այսու հանդերձ, յայտնի կ'երեւի Գաղղիոյ արդի վիճակին ներքին խանգարումը՝ որուն դարման չեն կրնար ընել արտաքին նպաստները։

## ԳԵՐՄԱՆԻԱ

Ռուսիոյ և Գերմանիոյ կայսերաց բանակցութեան մեծ կարեւորութիւն տրուեցաւ, մանաւանդ որ հոն ներկայ էին Մուրավիէֆ և Պիւլով պաշտօնեայք։ Մի և նոյն օրուան մէջ պաշտօնական կերպով ծանուցուեցաւ անկլօ-գերմանական դաշնակցութիւնն, որով Սամոայի կղզիներն, բաց ի մի քանիէն, պիտի անցնին Գերմանիոյ իշխանութեան. ի Վաշինկթոն ստորագրուեցաւ այդ պարգեւը։ Գերմանիոյ կայսրն շատ ուրախացաւ գերմանական քաղաքագիտութեան այս նոր յաղթանակին վրայ և Պիւլովին տուաւ Կարմիր արծուոյ մեծ շքանշանը, իսկ Հացֆէլտ գերմանացի կոմս դեսպանին ալ՝ Սեւ արծուենշանը։

Գերմանիոյ կայսրն մեծ ընդունելութիւն գըտաւ Անգղիոյ մէջ ալ. միայն Լորտ Սալիզպըրին կնոջ մահուան պատճառաւ չկրցաւ պաշտօնապէս ներկայ գտնուիլ այս հանդիսին։ Թէպէտ և այս կայսերական այցելութեան չուզեցին ոմանք քաղաքական կարեւորութիւն մը տալ, բայց անգղիական լրագիրք շատ զբաղեցան անոր վրայ և այսու ցուցին Գերմանիոյ և Անգղիոյ մէջ եղած սերտ բարեկամական յարաբերութիւնները։ Գաղղիական լրագիրք շատ զայրացան այս այցելութեան համար, մանաւանդ որ լուր ալ կայ՝ թէ Վիկտորիա թագուհին այս տարի մի քանի շաբաթ պիտի անցընէ Իտալիոյ մէջ և ոչ ի Գաղղիա։

## ԻՏԱԼԻԱ

Նոյեմբեր 14ին ծերակուտի Մատամա պալատան մէջ Ումպէրթոյ թագաւորն ճառախօսութեամբ մը բացաւ խորհրդարանը։ — Երկրորդ օրն նախագահ ընտրուեցաւ. — ընտրութենէն առաջ խօսուեցաւ Պիանքէրիի, Լուցցաթթիի և Ճիանթուրքոյի վրայ, բայց վերջապէս Յովսէփ Քոլոմպոս ունեցաւ առաւելութիւն քուէից։ Բայց Ռուտինի և իրեն համախոհք՝ Քոլոմպոսի հակառակ քուէ ձգեցին, պաշտօնարանին կարծիքէն տարաձայնելով։ — Նոյն ամսոյն մէջ Քօրթիս նշանաւոր ճառ մը խօսեցաւ, որոյ մէջ պարզեց իրեն անձնական և համախոհից գաղափարները։

Քօլայանի խնդիր յուզեց ամսոյս 20ի նիստին մէջ Մալթայի իտալական լեզուի մասին, բայց Վիսքոնթի Վենոսթա պատասխանեց՝ թէ իտալական տէրութիւնը պաշտօնական ազդեցութիւն մը չի կրնար ունենալ օտար տէրութեան մը ներքին վարչութեան վրայ։ Նոյն Վենոսթա պատասխանեց այլ և այլ խնդրոց՝ որոնք ծագեցան զանազան պատճառներով։ — Յետ մանր քննութեանց այնպէս կը համարուի՝ թէ Իտալիոյ տնտեսական մասն լաւագոյն վիճակի մէջ է։ — Երիտրիոյ և Սուտանի սահմանաց խնդիրը լուծուեցաւ Ռէննէլ Ռոտի գալովն ի Հռովմ, որ բաց աստի բերաւ ի Հռովմ Չամպէրլէնի ծրագիր մը՝ որով Անգղիա և Իտալիա պիտի դաշնակցին իրարու՝ պատրաստ գտնուելու համար՝ եթէ յանկարծ Մենելիք պատերազմ մղէ Անկլօ-եգիպտացւոց դէմ։

digitised by A.R.A.R.@

## ԱՑԼԵՒԱՑԼ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

ԱՒՍՏՐԻԱ–ՀՈՒՆԳԱՐԻՈՅ *արտաքին գործոց պաշտօնեայն Կօլուքովսքի ճառախօսութիւն մ'ըրաւ համազգային քաղաքագիտութիւնը պարզելով, և անկարծելի վերջաբանով մ'աւարտեց զայն՝ ըսելով թէ Աւստրիա–Հունգարիան ևս անհրաժեշտ հարկ է որ իւր նաւային զօրութիւնը աճեցընէ, այսու ակնարկելով որ նա ևս պէտք է գաղթականութեանց դիտումներ ունենայ։ Իսկ Այայի դաշնագրութեան մասին հաստատեց թէ դեկտեմբեր 31էն առաջ Գերմանիան ևս պիտի յարի անոր։ — Աւստրիական պաշտօնարանին մէջ Չէքերն ու ընկերավարք իրարու հետ երկար վիճաբանութիւններ ունեցան. — ջանացին ևս զԹուն ամբաստանութեան վիճակի մէջ ձգել։* — ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ *նախագահ Քինլէյի ճառախօսութեան ալ կարևորութիւն տրուեցաւ այս միջոցիս. — Նա իւր ճառին մէջ սերտ սէր մը կը ցուցընէ առ Գերմանիա և Անգղիա, յիշատակելով Սամոայի կղզեաց խնդիրը. — կը յայտարարէ՝ թէ Քուպայի խաղաղելէն ետքը՝ կղզւոյն վարչութիւնը Քուպացւոց պիտի անցնի, և Միացեալ Նահանգք իրեն պիտի պահէ միայն Փիլիպպեան կղզիները։ — Կ'ըսուի թէ Չինաստանի և Միացեալ Նահանգաց մէջ դաշնադրութիւն մը պիտի ըլլայ, որով Չինաստան պիտի պարտաւորի նպաստելու անկլօ–ամերիկեան վաճառականութեան։* — ՎԵՆԵԶՈՒԷԼԱՅԻ *մէջ կը շարունակուին ապստամբութիւնք Քասթրոյ նոր նախագահին դէմ, որ արիւնահեղ պատերազմով տիրեց Փորթոյ Քապելլոյի։* — ՍՓԱՆԻՈՅ *Պարչելլոնա քաղաքին մէջ մեծ խռովութիւն տիրեց, և ծանր վիճակի մէջ է վարչութիւնն, վասն զի շատերն յանձն չեն առնուր հարկ վճարել, այլ յօժարակամ կը բանտարկուին և կը փակեն խանութները։ Սիլվելա չուզեր դիւրաւ զիջանիլ. վասն զի, կ'ըսէ, այդ ապստամբութիւնն կը քակէ ազգային միութիւնը։ — Անշուշտ այս խորհրդածութիւնն ալ միակողմանի է։* — ՉԻՆԱՍՏԱՆԻ *գաղղիական հողին մօտ երկու գաղղիացի զօրավարք սպաննուեցան, — Ֆիւրրըժօլ հատուցումն պահանջեց, և ապա որոշակի հաստատուեցան գաղղիական հողին սահմանները, և Գաղղիացիք տիրեցին երկու կղզեաց՝ ուսկից հրաժարեցան Չինացիք։* — ՌՈՒՍԻՈՅ *և* ՃԱՊՈՆԻ *մէջ դաշնակցութիւն մ'եղաւ Քորէայի անկախութիւնը պահպանելու համար։* — ԵԳԻՊՏՈՍԻ *մէջ շփոթութիւն կայ. Լորտ Քիչնէրի հեռագրին համեմատ Ապտուլլահ խալիֆան սպաննուեցաւ պատերազմի մէջ իրեն էմիրներովը. — Եգիպտացիք տիրեցին խալիֆայի բոլոր բանակին։ Անգղիա օտար տէրութեանց ուշադրութիւնը դարձուց այս դէպքիս վրայ։*

## ՆԱՄԱԿԱՆԻ

ԳՕՄԳԱՑ. — Յ. Ա. — *Շնորհակալութիւն որսերու մասին բացառիկ պրակին բաժանորդ գտնելնուդ. ըստ Ձեր փափաքին՝ յայտարարութեան ուրիշ թիւթեր ալ խաւրեցինք։ Ձեր տուած հասցէներուն լաւագոյն է որ յայտարարութիւնը դուք խաւրէք։*

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — ԺՈՂ–ԴՐԴ–ԸՆԹԵՐՑ. — *Ձեր խընդրանքը միայն տպարանին սխալութեան և ոչ “Բազմավէպ„ին վերաբերելով, կը ցաւինք զՁեզ չգոհացնելնուս. “Բազմ„ը ներէն կ'ընդունինք։*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՐՆՄ. Հ. Ս. — *Յուշիկ* . . . . . 1

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՍԱՐԳՍԵԱՆ Հ. Ս. — *Կ. Գոոքէյման և "Գիրք վաստակոց„ի հայերէն թարգմանութիւնն* . 4

ԵՐԵՄ. Հ. Ս. — *Հանք և իրենց ստուգաբանութիւնը* . . . . . . . 7

ՉՐԱՔԵԱՆ Հ. Ք. — *Ս. Հիպպոլիտոս և իւր գրուածք հայ մատենագրութեան մէջ* . 10

ՏԷ ԳԱՐԱ. — *Արմէնիա անուան ստուգաբանութիւնը. թարգմ.* ԹՈՐՈՍԵԱՆ Հ. Յ. . 12

ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս. — *Անկիւրիա* . . . 16

ԱԻԳԵՐԵԱՆ Հ. Յ. — *Փառք ի բարձունս երգը.* 22

### ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՂԱՅԻԿԵԱՆ Հ. Ա. — *Ակնարկ մը Հ. Ա. Բագրատունւոյ կենաց և գործոց վրայ* . 24

ԽՄԲ. — *Երկու նամակներ* . . . . . 27

ՂԱՅԻԿԵԱՆ Հ. Ա. — *Մխիթար* . . . 29

ՍԱՐԳՍԵԱՆ Հ. Ս. — **Գրախօսական ակնարկներ.** *Ալէլուիա* . . . . . 32

*Բարեկիրթ աղջիկ* . . . . . 33

ԱԻԳԵՐ. Հ. Յ. — *Բանաստեղծութիւններ.* . 33

ԵՐԵՄ. Հ. Ս. — *Բնաշխարհիկ բառարան* . 34

ԵՐԵՄ. Հ. Ս. — **Հանդէս Հանդիսից** *— Նոր կեանք. — Հանդէս ամսօրեայ. —* L'Arménie. *— Արեւ. Մամուլ. — Մուրճ. — Արարատ. — Մշակ.* . . . . . 34

### ՆՈՐ ԿԵԱՆՔ

*Եւրոպական մամուլ* . . . . 39

ՏԱՆԴԷ. — *Երկրորդ պարունակ. Բղջախոհք. Մինոս և այլն. — թրգմ.* ՂԱՅԻԿԵԱՆ Հ. Ա. 40

Լ. Ք. — *Աւտօ–էլէկտոր* . . . . 44

*Քաղաքական անկիւն* . . . . . 46

*Նամականի* . . . . . . 48


digitised by A.R.A.R.@